



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ
ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴԵՐՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Այգեժոր 67,
հեռ. (37410) 32 12 45

№ 26/26.4/406-14
10.02.14թ

«Էկոլոգիական իրավունք» հասարակական
կազմակերպության նախագահ պարոն Ա. Գրիգորյանին

Ի պատասխան Ձեր 30.01.2014թ. հարցման, տեղեկացնում եմ, որ 20.11.2013թ. թիվ 000029 հանձնարարագրի, ստուգում պետք է իրականացվեր «Մեգո Գոլդ» ՍՊ ընկերությունում, սակայն ընկերության տնօրենը տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է ստորագրել հանձնարարագրի մեկ օրինակը՝ խոչընդոտելով ստուգման իրականացմանը: «Մեգո Գոլդ» ՍՊ ընկերությունում ստուգման բնականոն ընթացքն ապահովելու համար նյութերը ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն: «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 20.11.2013թ. թիվ 000029 հանձնարարագիրը չստորագրելու, ստուգման բնականոն ընթացքը չապահովելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34, 35, 37, 38 հոդվածներով, նախարարության նախաձեռնությամբ հարուցվում է վարչական վարույթ:

Հետագա ընթացքի մասին Ձեզ կտեղեկացնենք:

Ընդերքի պետական տեսչության պետ
ՀՀ գլխավոր պետական տեսուչ



Ե. Հովհաննիսյան